Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
պարոն Արկադի Խաչատրյանին

Հաշվետվություն գործուղման մասին

- **Գործուղված անձ**

Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Լիանա Փափախչյան

- **Երկիր/Քաղաք/Ժամկետ**

Հյուսիսային Մակեդոնիա, Սկոպյե, 2023թ. սեպտեմբերի 19,20:

- **Հրավիրող կողմ**

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով:

- **Նպատակը**

Մասնակցություն՝ բնապահպանական կատարողականի վերանայման (Environmental Performance Reviews (EPR)) թիմի կողմից կազմակերպված «Թափոնների կառավարում» թեմայով աշխատաժողովին:

- **Քննարկված թեմաները**

19.09.2023թ. «Aleksandar Palace» հյուրանոց, Սկոպյե

Քննարկվեցին՝

1. Թափոնների կայուն կառավարման առաջնահերթ խնդիրներ,
2. Ընդհանուր խնդիրները, մարտահրավերները և առաջարկությունները, ներառյալ գործիքները՝ ուղղված թափոնների կայուն կառավարմանը, ինչպես նշված է Բնապահպանական կատարողականի վերանայման (EPRs) մեջ և դրանց փոխկապակցվածությունը համապատասխան ԿԶՆ-ների հետ,
3. Թափոնների հետ կապված EPR առաջարկությունների իրականացման վերաբերյալ փորձի փոխանակում, կառավարում և շրջակա միջավայր,
4. Երկրների ներկայացուցիչների ներկայացումները (զեկույցները).
   - Ալբանիա
   - Հայաստան

- Ղազախստան
- Հյուսիսային Մակեդոնիա
- Վրաստան

5. Թափոնների կայուն կառավարման հիմնական տարրերը,
6. Շրջանաձև տնտեսություն, ներառյալ տնտեսական գործիքները (օրինակ՝ հարկերը, օգտագործողների/ներմուծողների վճարները, արտադրանք/թափոն,

7"Մոնիտորների էլեկտրոնային թափոններ Կենտրոնական Ասիայում և Արևմտյան Բալկաններում. մեթոդներ և արդյունքներ,

8" Ավանդների վերադարձման համակարգ – շշերի հավաքագրման սխեմաներ – Սլովակիա

9"Թափոնների կայուն կառավարմանն աջակցող նորմատիվ իրավական շրջանակ և քաղաքականության գործիքներ,

10"Թափոնների կառավարման համարժեք, անվտանգ և մատչելի ծառայությունների/ենթակառուցվածքների հասանելիություն, գենդերային և խոցելի խմբերի ինտեգրում,

11" Արտադրողի ընդլայնված պատասխանատվության սխեմաներ,

20.09.2023թ. «Aleksandar Palace» հյուրանոց, Սկոպյե

1. Ինտերակտիվ նիստ՝ առաջնահերթ ոլորտներում գործնական լուծումների բացահայտման վերաբերյալ, աջակցություն թափոնների կայուն կառավարմանը,
2. Խմբերի բաժանում՝ ըստ տարածքների, ինչպես նշված է ծրագրի հավելվածում: Խմբերը աշխատեցին 45 րոպե՝ քննարկելու մարտահրավերները (օրինակ՝ քաղաքականության հարցեր, տեխնիկական հարցեր, ֆինանսական հարցեր, փորձաքննության առկայություն) և բացահայտելու համար քաղաքականության տարբերակներն ու գործնական լուծումները հետևյալ առաջնահերթ ոլորտներում.

- Թափոնների շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազագույնի հասցնելը,
- Թափոնների ոլորտի կազմակերպման բարելավում,
- Թափոնների կառավարման ֆինանսավորման բարելավում,
  Զեկուցում լիագումար նիստին, քննարկում և ամփոփում,
- Քաղաքականություն,
- Ենթակառուցվածքների և ներդրումների չափորոշիչներ և պլանավորում,
- Ֆինանսավորում (վճարներ, սուբսիդիաներ և հարկեր, սակագներ, ծառայությունների հասանելիություն, կարիքներ և խոցելի խմբերի ներառում)
- Տեղեկատվություն և իրազեկում

- Թափոնների հետ կապված EPR առաջարկությունների իրականացման վերաբերյալ խմբերում քննարկում,
  Զեկուցում լիագումար նիստին, քննարկում և ամփոփում,
- Քննարկում առաջընթացի ուղիների վերաբերյալ (միջոցառումների բացահայտում)
- Քաղաքականություններ և պրակտիկա՝ հիմնված ՄԱԿ-ի ԵՏՀ բնապահպանական կատարողականի վերանայման վրա
  Զեկուցում լիագումար նիստին, քննարկում և ամփոփում,

- **Արդյունքները**

Աշխատաժողովը պրակտիկ փորձի փոխանակում էր մասնակից երկների պետական համակարգի ներկայացուցիչների, միջազգային փորձագետների համար, որի ընթացքում մասնակիցները փոխանակվեցին առկա լավագույն փորձով, կարիքներով, գործիքներով և առավելություններով:

- **Նշումներ**

Բնապահպանական կատարողականի վերանայման (Environmental Performance Reviews (EPR)) թիմի փորձագետների կողմից ներկայացրած առաջարկությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է իր զեկույցը՝ ուղղված թափոնների կայուն կառավարմանը: Զեկույցները կքննարկվեն թիմի կողմից՝ հետագայում նոր առաջարկություններ ձևավորելու և երկրներին աջակցելու համար:

Վտանգավոր նյութերի և թափոնների
քաղաքականության վարչության
գլխավոր մասնագետ՝

Լ. Փափախչյան